

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀՆՉՍԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՓՏՈՒԹԵԱՆ ՕՃԱԽԸ

Կսկծալի լուրերը կը շարունակեն հասնիլ Տառապանքի Երկրէն: Կը զարնեն, կը սպաննեն, կ'առևանգեն, կը բռնաբարեն ու կը կեղեքեն հոն: Ամբողջ լքուած, արհամարհուած, ժողովուրդի մը մահացումն է որ կը կատարուի, եղբանական յամառութեամբ մը: Պաշտօնական աւագակութիւնը հոն սանձարձակ կը կողոպտէ: Սրտի ու խղճի է՛ն փափուկ զգացումները պիշեր ցորեկ նախատինքի ու հայհոյանքներու կ'ենթարկուին Հայ Աշխարհին մէջ: Գաւառներէն եկած տեղեկագիրներէ յայտնապէս կ'երեւի սուլթանին հայաջինջ քաղաքականութեան անդադրում գործադրութիւնը: Հայ զիւղացին նիւթապէս սնանկացնելու, բարոյապէս ապականելու ու անոր կեանքը անտանելի դարձնելու համար հնարուած ճնշողական այլազան ու հրէշաւոր միջոցները վայրագօրէն կը շարունակուին: Կը ծեծեն, կ'անպատուեն, կը թալլեն, կը ջարդեն, ու Հայը չկրնար ձայն բարձրացնել եւ՝ եթէ պատահի ալ որ բողբո՛լ բռնցքի հարուածներու տակ բանտ կ'առաջնորդուի իբրև խռովարար:

Դանակը ոսկորին հասած է: Ահաւասիկ կացութիւնը Հայաստանի մէջ:

Աօդին, Հայոց պատրիարքը այնքան ծանրակշիւ մտահոգութիւններ ունի, «պատարագի արարողութիւններով» ու սուլթանին «արեւատութեան» նստրուած աղօթքներով այնքան զբաղած է որ բոպէ մը չգտնէր Հայրենիքին աննշան դէպքերովն ու անոր անշահեկան վիճակովը ժամավաճառ ըլլալու:

Պաշտօնական մարդիկ—էֆէնտիներ ու փաշաներ—պատրիարքին հետ ձեռք ձեռքի տարիներէ ի վեր ամէն անարգ միջոց գործածեցին, սուտի ու խաբէութեան առջեւ չընկրկեցան՝ Հայ ժողովուրդին ծածկելու գաւաթին կացութիւնը, զայն նոյն իսկ բարուողուած ցուցնելու: Արտասահմանի մէջ ալ, ո՛ր եւ է կերպով իրենց ամուլ կեանքը ապահոված Հայեր վատութիւնն ունեցան ուժ տալու Երլարզի գազանին՝ Հայուն արիւնովը լուաց-

ուած պահուն՝ ըրած այս թելադրանքին: Ու շահախնդիր վաճառականր, փճացած ուսանողր, թուլամորթ ու շուարած ցրագէտր, վերջապէս դատալքութեան ու պոռոտախօտութեան բոլոր հոյակապ ասպետները միաբերան Յեղափոխութեան դէմ ոռնացին: Հինգ դարերու ստրկութեան բրգացած աղբին տակէն հազիւ դուրսը վեր առնող ժողովուրդին մէջ, ընդզու՛մի ու դիմապրութեան ազնուացուցիչ ու փրկարար ոգին խեղդել փորձեցին կոշտակներով ու եկեղեցիներու բեմէն տրուած խաբեպատիր ապահովութիւններով ու ստրկական յորդորներով: Հակայեղափոխական բրօքախանտ մը սիտան, ու ճղճիմ անձնութիւններու մը անընդունակ՝ լրբօրէն անձնամուղ ու շահախնդիր կեղծասիրները՝ Հայաստանը սեւաւորող սուլթան առջեւ կոկորդիլոսի արցունքներ թափելով՝ կուրի դաշտին վրայ, բանտին մէջ կամ կախադանին տակ Ազատութեան համար ինկողներու յիշատակը պղծեցին, զանոնք ազգին տունը քանկող սրիկաներ հոգակեցին:

Ստրկութեան ներկայացուցիչ՝ Սքեմի ու Դրամի մարդիկներուն հետ—անհաւատալի բան—գտնուեցաւ երիտասարդութիւն մը որ Մարդկութեան խղճմտանքը տակնուվրայ ընող տիեզերական մեծ Ոճիբը արվարացնելու համար պարզուած պիղծ դրօշակին տակ փութացու ազգովին Երլարզի Մարդասպանին սոքը ինչալու, անոր ներողութիւնը աղերսելու ու անոր շնորհներուն արժանանալու քստմելի գաղափարին ձայնակցեցաւ:

Անդիտակից, ոչխարամիտ ու հպատակող ժողովուրդ մըն ալ ստրկօրէն հետեւեցաւ, հնազանդեցաւ մեծ—փոք ու մեծ—դիբք ունեցողներու զգուելի խմբակին:

Այսպէս ամէն բան սուլթանին կամքին յանձնեցին կեղծիքի, վատութեան ու շահախնդրութեան ուխտուածները, կայսերական եղեռնագործին հետ Հայուն բնաջնջումին դաշինքը կնքելով:

Ու սուլթանն ու պատրիարք մեղօակցեցան, գործակցեցան, առաջինը կոտորումին սիստէմը նրբացնելով, կատարելագործելով, երկրորդը՝ մատնութեան պատնէչներ կանգնելով դիակներուն շուրջը, որպէսզի աչք մը չտեսնէ արիւնին անվերջ հոսումը, ականջ մը չլսէ հոնդիւններուն ահաւոր աղմուկը:

Պարտաճանաչ, խղճամիտ ու պարկեշտ մարդիկ Օրմանեանի աչքին անհանգուրժելի եղան: Ճիզուէթի իր

բոլոր կարողութիւնը գործածեց ազգային շրջանակէն ու Պոլիւէն կամաց կամաց հեռացնելու ամէն անոնք որ հանելի չերեցան իրեն, որոնք իր մթին դիտումներուն կրնային խոչընդոտ մը ըլլալ:

—Տէր Սահակը կասկածելի ընթացք մը ունի, կիրակոս վարդապետը յեղափոխականներու հետ յարաբերութեան մէջ է, իգնատիտ եպիսկոպոսը այս ինչ տեղը ղրկելու է, փսփսաց կառավարութեան ականջն ի վար:

Աղկից վերջը, Ղալաթիոյ եկեղեցիին ժողովարահը պատրիարքարանի դահլիճը ու պատրիարքին բնակարանը խուժեց Հայ մենձ աղաներու, պալատի փոխնորդներու, ժողովուրդին արեանը մէջ բաղզ որոնողներու վատահամբաւ փոխակ մը, որ ազգին գործերը վարելու պատրուակով զոնփակ խեղկատակութիւններու մէջ ազգային իրաւունքներու դէմ դաւեց պաշտօնապէս: Ժողովուրդը բան մը չգիտցաւ այդ դաւաճան հաւաքումներուն մէջ անցած դարձածներէն: Պոլսոյ հայ մամուլը՝ պատրիարքական թելադրանքի մը վրայ՝ հրաման ստացաւ սասիկանութենէն ոչինչ չգրելու ազգային ժողովներուն մէջ նիւթուած մեքենայութիւններուն մասին: Խառն ժողովի՝ աշխարհական անդամներէն ոմանք՝ ցամաքած հոգիներ՝ իրենց կուրճը արծաթէ կամ ոսկիէ կըտորով մը զարդարելու ունայնամտութենէն մղուած, ուրիշներ, իրենց աղջիկներուն դրամօժիտը պատրաստելու սրտառուչ եռանդէն բռնուած՝ իրենց փութկոտ ըստարկութիւնը մատուցին Ոճիրին: Աշխարհականներէն հազիւ մէկ երկուքը ու քանի մը եկեղեցականներ ալ, սկիզբները, պարկեշտութեան տարտամ կամէութիւններ ցուցուցին ու վեհերոտ շարժումներով ազգային աւազակներու յափշտակութիւններուն դէմ մարտնչիլ փորձեցին: Բայց Օրմանեանի շեշտակի սպանալից ու խորհրդաւոր նայուածքները — էֆէնտիներու ու փաշաներու մեղսակցութեամբը լուսաւոր — բաւական եղան անոնց լեզուն կոկորդնուն մէջ կապկպելու:

Պէտք չէ սակայն մոռնալ խառն ժողովոյ երկու եկեղեցական անդամները, որոնք՝ թէեւ հին դպրոցի աշակերտ, յետագէմ գաղափարներու կուսակից, նոր գաղափարներ ընդունելու անընդունակ՝ պարզապէս պատրիարքին ու իր դաւակիցներուն անհանդուրժելի վատութիւններէն զուտած ու ազգին շահերը վտանգուած տեսնելով՝ հակառակ Օրմանեանի ոստիկանական ու աքսորի սպանալիքներուն, իրենց խղճին զծած ճամբէն չուզեցին շեղիլ, ու միս մինակ ու աներկիւղ՝ դաւաճաններու դաշնակցութեան դէմ կեցան մինչեւ վերջը: Տարիներէ ի վեր, Պէշիկթաշի գերեզմանատան կայսերական գրաւումէն սկսեալ, Հայաստանի անվերջանալի հարստահարութիւններու վիճաբանութենէն անցնելով, մինչեւ Սահմանադրութեան բոնաբարութիւնը ու Սիսի կաթողիկոսութեան խնդիրը՝ քայլ առ քայլ մաքառեցան զեղ-

ծուսներու ու նենգութիւններու դէմ, և ամէն անգամ որ Օրմանեան եւ իր խմբակը «այո՛» ըսին, վահրամ Մանկունի ու Գրիգորիս Յովհաննէսեան եպիսկոպոսները «ո՛չ» պատասխանեցին:

* *

Հակառակ Օրմանեանի ու իր մարդոց Յէրափոխութեան ու յեղափոխականներուն դէմ արձակած բանադրութեան, հակառակ յեղափոխականներու կողմէ գաւառի անտանելի վիճակին վրայ եղած յայտնութիւնները սուտ հանելու ջանքերուն, հակառակ «չնորհիւ կայսերական վեհափառութեան անգործութիւնը կը քաշի» այնքան սուտ որքան լպիրշ բանաձեւին հայ պատրիարքին բերնին մէջ, մինչդեռ ժողովուրդը հոգեվարքի մէջ կը տապալտի անդին՝ Հայաստանի կացութիւնը երթալով կը վատթարանար, հարստահարութիւնները կը սաստիկանային: Ու ժողովուրդը ճարահատ սո՛հարիւրերու անգամ ըլլալով՝ պատրիարքարան կը դիմէ, անկարելի խարակի մը անդադար զարնուող ալիքներու պէտ, առանց բան մը կարենալ հասկնելու անոր, առանց բան մը հասկնալու անկից:

Գաւառներէն ամէն օր Պատրիարքարան հասնող ու հոն Յաւի մեծ ու թերեւ կորսուելու դատարարուած յիշատակարան — մատենախի մը դրուագները կուտակող տեղեկագիրներուն ընթերցումէն վերջապէս խոփուած, Օրմանեանի ընթացքէն հուսկ ուրեմն զայթակղած եւ սպաւնացող պատասխանատուութիւններու երկիւղէն ցընցուած՝ երկար դեգերումներէ, տարիներու մեղսակից ու անարդ լուծենէն ետքը, պարտաճանաչութեան ու խրղճմտանքի բարենշան զարթումով մը՝ պահպանողական ու սուլթանաւոր եկեղեցականներ կուգան՝ բոլոր պարկեշտ ու անկաշառ Հայերուն հետ՝ հաստատելու թէ գաւառներու վիճակը իրացնէ անտանելի է և թէ Հայութիւնը բնաջնջումի ճամբուն մէջն է չնորհիւ կայսերական կառավարութեան:

Այս եկեղեցականները, խառն ժողովի նախորդ նիստին մէջ, պոռթկացին վերջապէս: — «Ինչ պիտի ըլլայ վախճանը այս տխուր վիճակին, պոռացին անոնք, մինչեւ ե՛րբ այսպէս անձայն անշուշտ պիտի երթանք եւ գաւառներուն մէջ անգուլ անդադրում շարունակուող հարստահարութիւնները լոին պիտի հաստատենք»: Եւ առաջարկեցին որ «բոլոր առկախ խնդիրները, տեղական թէ գաւառական, Գրան ներկայացուին պատգամաւորութեամբ մը և պատրիարք ու վարչութիւն հրաժարին»: Օրմանեան ու աշխարհականները ընդդիմացան այս առաջարկութեան: Բայց եկեղեցականներու «պընդմանը» վրայ՝ օտիպուեցան տեղի տալ, ու թագրի մը զրուեցաւ որով կը յայտարարեն թէ երկու ժողովներն ալ չեն կրնար այլեւս պաշտօն վարել ու նոր ընտրութեան հրաման կը խնդրեն:

* *

Իզմիրլիեանի աջօրուելն ի վեր հայ ժողովուրդը պատրիարք չունի։ Ասիկա վերջապէս պետք է զիտցուի։ Պատրիարքի տեղ՝ կեղծաւոր, նենգամիտ, անխղճահար Օրմանեան մը, իսկ Պատրիարքարանի տեղ լրատուութեան ետքախ մը կամ Պապը—Չապլիլի մասնաճիւղ մը, ինչպէս որ կ'ուզէք։ Օրմանեան պատրիարքական ասային տիրանալն ի վեր, ոչ միայն Մեծ—Մարդասպանին ծրագիրներուն հըու և ճարպիկ գործիքը եղաւ, այլ ինքը անձամբ, աւազակաբարոյ ու ապականած մարդակերպներ զուխը ժողովելով առանձին փորձանք մը եղաւ Հայութեան ու կեղեցումի ուրոյն մէջանիզմ մը հաստատեց ազգային պաշտօնատուններուն մէջ։ Օրմանեանի շնորհիւ Հայոց Պատրիարքարանին մէջ միահեծան կը տիրապետէ վաշխատու մը, Տիգրան Տէր—Ներսէսեան կոչուած օրիկան,—արժանաւոր քեռայրը, իր վեղարաւոր աներձագին։ Ստամպուլի խաները նեղ կուզային անոզը վաշխատուին, ու Օրմանեան, որ իր չիլ նպատակներուն իրականացումին համար հաւատարիմ ու վտաւհելի մեղակիցներու պէտք ունէր, զայն չարչայէ կանչեց օր մը ու Պատրիարքարանի գործակատար կարգեց։ Մոռչառի հոգիով կրկնաւորուած վաշխատուն, Պատրիարքարան տեղաւորուելն ի վեր, զայն անբարոյականութեան ու զեղծումի որջ մը դարձուց։ Իլմոխապիւրի պէս պարզ ու տարրական գործի մը կարգադրութիւնը այնքան դժուարութիւններու բաղխիլ սկսաւ հոն, որքան Պապը—Չապլիլէն անցագիր հանելու գործողութիւնը։ Կաշառքը վեհափառօրէն մուտք գտաւ հոն։ Իլմուխապիւր մը ստանալը Տէր—Ներսէսեանի քմահաճոյքէն կախուած է։ Կամ կը մերժէ, կամ կուտայ, իրեն գիտնալիք բանն է։ Եւ որպէսզի տայ՝ պէտք է զինքը գոհացնել։ Ուղղամիտ ու պարկեշտ մարդիկը մէկիկ մէկիկ հեռացուց։ Մնացած ստորագաս պաշտօնեաները իր օրինակին հետեւեցան, ու անոնք որ պատրիարքական քեռայրին գործիքը կամ մոխապիւրը ըլլալ չուզեցին՝ արտաքօնեցան։ Անխորհրդապահ ու անախորժ ուշադրութիւններէ ազատագրուած՝ քեռայր ու աներձագ՝ զլուխ զլիւտուած՝ հանձարեղ միջոցներ հնարեցին շահագործումի ու հարոստահարութեան։ Տէր—Ներսէսեան հրահանգ տուաւ Պատրիարքարանին պաշտօնեաներուն որ՝ եթէ կասկածելի կերպարանքով մարդիկ ներկայանան իլմուխապիւր անելու՝ ստիկանութեան մատնանիչ ընեն զանոնք։ Ժողովուրդէն զրամ շորթելու համար յղացուած ահաւոր միջոց մը եղաւ իրենց առիկա։ Կասկածելի բառը բաւական էր խեղճ ճամբորդներու զրպանը պարպելու։ Վայ անոր որ գժբազդութիւնը կ'ունենար իր բանտարկուած զաւկին կամ երկանը համար՝ Հայոց Պատրիարքարանին հայրագործով միջամտութեան զիմելու։ Իրամին քանակէն և յաճախ ազերօտրու մօր կամ կնոջ ֆիզիքական առաւելութենէն կախում ունէր՝ Գաբու—Քեհեասիին կողմէ ստիկանութեան մօտ բարեխօսութիւն մը։ Ո և է խնդրի համար

պատրիարքարանի աջակցութեան զիմողներուն թիւը շատուազած է հիմա, մասնաւորապէս էրիկմարդներուն։ Թրքական բարբարոսութեան զոհերը իրենց ցաւին դարմանը, անհատական հազուագիտ օժանդակութեան մը, կամ պարզապէս բաղդին ձգել կը նախընտրեն աւելի քան Պատրիարքարան կրթալ։ Մէկէ աւելի անգամներ, զզուանքով խառն սոսկում մը, կեցուցած է Հայոց Պատրիարքարանը ուղղուելու ստիպուած յուսահատ ու շուարուն քայլերը։

Տիգրան Տէր—Ներսէսեանի ոտսիկանական յարաբերութիւնները ծանօթ են Պոլսոյ մէջ։ Օրմանեանի քեռայրը, Պատրիարքարանի գործակատարը, ստիկանապետ Շէֆիզին վարձուածն է միանգամայն։ Պատրիարքարանի մէջ անցած դարձածին, մտնող ելողներուն, պաշտօնէութեան ընթացքին, խառն ժողովի մէջ եղած վիճաբանութիւններուն, տրուած որոշումներուն ու իւրաքանչիւր անդամի—Թիւրքիոյ մէջ խաֆիլներուն վրայ ալ խաֆիլէ կը կտրգեն—խօսքին ու նիտաուելացին նկատմամբ Շէֆիզին լուր կը տանի։ Ոտսիկանական հեղինակութեան կոթնած՝ Տէր—Ներսէսեան՝ ակնարկով մը, բառով մը, բանտի ու աքօտրի սպանալիցներ կը տեղացնէ ամէն անոնց վրայ, որոնք իր քմահաճոյքներուն առջեւ տեղի չեն ուզեր տալ, որոնք իր աներձագին ու անոր արարքներուն ազգած անդիմազրելի նողկանքը իրենց երեսն ի վեր փոխել կը համարձակին։

Խաշակիր աւազակապետը իր կողոպուտները հանդարտօրէն մարտելու և միանգամայն իր գողութիւններուն ու զեղծութիւններուն գաղտնիքը զուրա չհանելու համար հաւատարիմ մեղակիցներու թիւը աւելցնելու հարկին մէջ գտաւ ինքզինքը։ Եւ ո՞վ կար այս պէտքին լրբօրէն աւելի յարմար ու ծառանգականօրէն աւելի ընդունակ քան նոյն ինքն Շէֆիզի «Տիգրան»ին լակոտները, որոնք մեծցած, հասած՝ դրամի, զիրքի ու ամուսնանալու կը կարօտին։—Մենք չէ՛ որ գէշ աներձագ մը կամ պարտազանց յօրեղբայր մը պիտի նկատէինք Օրմանեանը։

Օրմանեան ազգային ժողովներն ու Պատրիարքարանը կառավարութեան տրամադրութեան տակ վատերօւ ծաւաղրաւայր մը ընելէ զատ, իր անձնական բնաւորանն ալ կոնակի վրայ բացաւ անոնց։ Հոն պիտի գտնէք կաթոլիկ հայ կին մը ու իր երիկը—հին խնամի մը հաւանօրէն—որ ախողոսաւոր մուշտն է օուլթանի տաւջին քարտուղար Թահսին պէյին։ Հայոց պատրիարքը այս պարօնին ներկայութենէն զժգոհ ըլլալու բոլոր ձեւերը կը կեղծէ, բայց՝ զգայնական կարգի փափուկ նկատումով մը՝ ինքզինքը ստիպուած կը զգայ ձայն չհանելու։ Այս կից գատ կայ նաև պատրիարքին կարօպետ Աղան, — իր դանապանը, խորհրդականը, գաշտնապահը ու խաֆատարը, որ միանգամայն ստիկանութեան մարդն է։ Կեղծիքի ու զեանաքարչ ստորնութեան տիպար մըն է առ մարդը՝ որ ուժին առջեւ փոքի վրայ կը պրկի ու տկա-

բութեան զիմաց գագան կը կտրի: Հակառակ տարիքը առած ըլլալուն՝ սուր հոտառութիւնով, ականջը ծակ շուն մըն է: Կը տեսնէ, կը լսէ ամէն ինչ որ պատ-
 րիարքանիստ շէնքին մէջ տեղի կ'ունենայ ու իր աչքէն ու լսողութենէն վրիպածն ալ իր Տերոյժէն կ'իմանայ յաճախակի գլուխ-գլխի սիրալիր տեսակցութիւններու մէջ: Ու ինչնր չեն անցնիր այդ անձնական բնակա-
 րանին մէջ: Տարուան մեծ մասը Պատրիարքարանին Գիւանը Օրմանեանի տունը կը փոխադրուի: Հոն ժո-
 ղովներ կը գումարուին ու կնճոտոտ բոպէներու կնճոտոտ խնդիրներուն վրայ վիճաբանութիւններ կ'ըլլան: Հոն անցած-գարձածը, մանող-եղողները տեղնիտեղօք ու մանրամասնօրէն կը տեղեկագրուին ուր որ անկ է: Ու պալատ ու ոստիկանութիւն գիտեն թէ օրը քանի՞ մարդ կ'անցնի անկէ, ի՞նչ գոյն ունին, ժօրուցնին սրածայրէ թէ քստակուտի, կարծախոսակ են թէ բարձրահասակ, հագուստնին սեւ է թէ մոխրագոյն:

Պատրիարքական աթոռը երբէ՛ք ինկած չէր անպատ-
 օւտեթեան այն առտիճանին ուր կը գտնուի հիմա ու պատրիարք մը երբէ՛ք այնքան շարադէտ, այնքան ա-
 տելի եղած չէր որքան Օրմանեան Մաղաքիան: Թիւրքը կ'արհամարհէ, կը նախատէ զինքը, Ազգը պժգանք կը յայտնէ իրեն զէժ, ու Եւրոպացին չի յարգեր Տեր-Ներ-
 սէպեանի աներձագը: Զգացումներու նոյնութիւնը աչքի առջեւ ունենալով՝ մարդ պիտի փորձուէր կարծել թէ մեր ունեւոր դասակարգին մէջ գոնէ համակրանք կը վայելէ Օրմանեան, բայց չէ՛, հարուստներն ալ չեն սի-
 բեր զինքը:

Մարդիկ, որոնք իրենց քիթէն անցին չեն տեսներ գերազանցօրէն բանաւոր կը կարծեն ու կը յայտարարեն թէ Օրմանեանի տեղ ուրիշ ոեւէ մէկը չպիտի կրնար աւելի արժանաւոր ու արդիւնաւոր ըլլալ: Գիւրի՛ն ու հա-
 ճօյակատար չքմեղանքն է աս անպարտաճանաչութեան ու նենգութեան: Մենք Օրմանեանէն չենք սպասեր որ ելլայ հերոս կարի, բայց կը պահանջենք որ պարկեշտ ըլլալ գիտնայ, ու՛ եթէ չկրնար արիարար պաշապանել Ազգին շահերը՝ գոնէ գանձը չմասնելու խղճմտանքն ու միջակութիւնը ունենայ: Տխմարութիւն պիտի ըլլար մեր կողմէն Հայաստանի բարեկարգութիւններուն հօր ու անվհատ մղում մը ակնկալել Օրմանեանի տեսակէն պատրիարքէ մը: Բայց սպասել որ Օրմանեան ուղղատու-
 թեամբ, խղճահարութեամբ ու անշահախնդրութեամբ վարէ իր պաշտօնը ու պարկեշտօրէն ընէ ինչ որ հա-
 սարակ մարդ մը պիտի կրնար ընել, ներկայ պարագա-
 ներուն մէջ, ծայրայեղ ու արտաոտոց դժուարահաճու-
 թիւն մը չպիտի ենթադրէր:

Պատրիարքարան հասած տեղեկագիրները Օրման-
 եանի սեփականութիւնը չեն: Անոնք զրկուած են որպէս զի գաւառի դժուրակ վիճակին զարման մը խոր-
 հուի: Անոնք արշիփներուն մէջ փոշոտելու կամ միճտե՛ր

աչքը ըլլալու համար չեն զրկուիր:

Պատրիարք մը միջնորդ մըն է Ազգին ու սուլթանին կառավարութեան միջեւ և միանգամայն ազգային գոր-
 ծապիր իշխանութեան պետը: Դուռը երբ Հայ ժողովուր-
 զին մահու եւ կենաց խնդիրներուն հանդէպ խուլ կը մնայ, և երբ ասիկա անսահմանօրէն կը կրկնուի ու կը կրկնուի՝ պատրիարքը, այդ պարագային, պարոտակա-
 նութիւն մը ունի զոր հարկաւորաբար կատարել ստիպուած է: Այդ պարտականութիւնը իրաւասութիւն մըն է մի-
 անգամայն զոր իրեն կուտայ մասնաւոր սպէս Պերլինի գաշնագրութիւնը: Հայաստանի անհանդուրժելի կացու-
 թեան վրայ Պետութեանց ուշադրութիւնը հրաւիրելը Թիւրքիոյ Հայոց պատրիարքին անվիճելի իրաւունքն է: Այսօր կարելի չէ գտնել Հայ մը որ անկեղծօրէն մտա-
 ծելով՝ կարենայ ըսել թէ Դուռը կամ Պալատը Հայոց նկատմամբ բարեացակամ տրամադրութիւններ ունին: Ա-
 մէն մարդու ծանօթ է սուլթանին հայաշինջ քաղաքա-
 կանութիւնը: Վերջսպէս արեան հեղեղները ու անկէ ի վեր անընդհատ շարունակուող մասնակի ջարդերն ու սիսթէմաթիքօրէն ի գործ գրուած հրէշային ճնշումները, Գրան վրայուսադրութեան ամեն պատրանք ու է՛ն թանձր լաւատեսութիւնն ալ առ յաւէտ շնչեցին:

Արդ, քանի որ սուլթանին կառավարութեան բան մը չկրնար յուսալ պատրիարքը — Նոյն իսկ պահպանողա-
 կաններու, շափաւորներու, ու զիւանագիտութեան զուրօ բան մը չտեսնողներու տեսակէտէն նայելով — իր անխու-
 սափելի պարտականութիւնն ու հարազատ իրաւունքն է Պե-
 տութեանց ուշադրութիւնը հրաւիրել տառապող ժողովուր-
 զին անհանդուրժելի գրութեան վրայ: Պէտք է պարբե-
 րաբար ու կանոնաւորապէս հազարել անոնց պատճէն-
 ները այն բոլոր տեղեկագիրներուն որոնք օրը օրին մը խացող երկրին շորո ծայրերէն սպաննութիւններու, պաշ-
 տօնական ու անպաշտօն կեղեքումներու գուժերը կը բերեն Գուժ-Գարու: Պէտք է յիշեցնել անոնց շարունակ իրենց հանդիսաւոր յանձնառումները:

Օրմանեան որ այս բոլորը առաւել քան ո եւ է մէկը գիտէ, չի կրնար՝ առանց գաւաճանութեան ու վատութեան զրոշմովը խարանելու ինքզինքը՝ գաւառին վիճակը քօ-
 զարկել Հայութեան ու Եւրոպայի աչքին:

Պատրիարքը չուզէր ճանչնալ որ դէպքերէն ի վեր Հայ ժողովուրդին ճակատագրին ու սուլթանին միջեւ իրմէ գատ՝ ուրիշ միջնորդ մըն ալ գոյացաւ, — Եւրո-
 պական միջամտութիւնը: Օրմանեան կարող կը զգայ ինքզինքը՝ առապանքի ու արեան զին՝ այս առաւելու-
 թիւնը ուրանալու: Օրմանեան չի գիտեր որ Ազատութեան հետապնդող ժողովուրդներու Պատրիարքութիւնը ազգե-
 ցութիւն ու հեղինակութիւն չունի Թիւրքիոյ մէջ, երբ ան չկոթնի պետութեանց գոնէ բարոյական աջակցու-
 թեան: Անշուշտ Օրմանեան շատ լաւ գիտէ ասիկա,

հապա Երևուրդի զագանին հաճելի ըլլալու մտահոգութիւնը, հապա սուլթանին կայսերական շնորհները կործարնցնելու սարսափը, հապա Տէր-Ներսէսեանի ու անոր լակոտներուն ապագան:

Գտնուին թերեւ խորիմաստ բոլիթիզոսներ որոնք բարձրորէն անքաղաքագիտական ու անխոհեմ ու աղի. տաւոր նկատեն պատրիարքին կողմէ հայ ցաւերը մարդկութեան խղճմտանքին յանձնելու խնամքը: Մէկզի ձգենք անիմաստ ու անհիմն այս կարծիքը ստրուկներու, որոնք՝ զաշոյնը վիզերնուն՝ ո՛չ միայն՝ անկարող պիտի ըլլային ինքնապաշտպանութեան շարժումը քործելու, այլ պոռալ իսկ չպիտի համարձակէին վախնալով որ իրենց օգնութեան ձայնը լսող մը կ'ըլլայ: Բայց վայրկեան մը ենթադրելով իսկ թէ ճշմարտութեան հիւլէ մը կրնայ գտնուիլ այդ մտահոգութեան մէջ՝ ուղղակի ու անուղղակի միջոցներ կը պակսին արդեօք Օրմանեանին իր այս պարտքը կատարելու անձայն անշըշուկ, առանց ո ու է կասկած արթնցնելու, առանց բան մը վտանգել — ըլլայ նոյն իսկ իր կաշին մէկ կտորը — ստիպուելու ատով: Ո՛չ, Ու մեր այս ժխտումին հերքումը Օրմանեանէն չէ որ պիտի դար ապահովարար:

Օրմանեան ո՛չ միայն զեպաններու ուշադրութիւնը չուզեց հրաւիրել ու ծածկեց շարժերէն յետոյ Երկրին մէջ Հայուն մահացումը, այլ անամօթաբար օտեց ու գարշելի ցածութիւնը ունեցաւ արգիլելու, ապարդիւն հանելու՝ Արինէն ճողպարած Հայերու իրենց տառապող եղբայրներուն աղաղակը Աշխարհի ակնաջին հասցնելու համար ըրած ջանքերը: Ի՞նչ կայ աւելի հրէշորէն վատ, քան Օրմանեանին Լահէ քաշած հեռագիրը:

Լահէի Դեսպանաժողովին մէջ երբ տիեզրք իրար կ'անցնէր, երբ բովանդակ մարդկութեան ցաւերուն դարձան մը կը փնտռուէր՝ Յաւի Ազգին պատրիարքը անարգօրէն, լպիրշօրէն, վայրագօրէն, իր Բերայի տունէ հետեւեալ հեռագիրը զրկեց Լահէ:

«Անհատներ կրնան Համաժողովի պատգամաւորներուն յիշատակագիր ներկայացնել հայկական խնդրին վրայ, բայց այդ անհատները ո ու է տիտղոս չունին ազգը ներկայացնելու, և ո՛չ իրաւասութիւն ունին, ո՛չ ալ պաշտօն, յանուն ազգին խօսելու, հետեւաբար պէտք չէ անոնց լսել»: — Մաղաքիս Օրմանեան կայլն:

Ու մենք չենք մոռցած որ այդ ամօթալի հեռագիրը խմբագրողը Գարբիէլ Նորատունկեանը եղաւ:

Մ'աւ է որ պատրիարքը օտիպուած ըլլայ այդ հեռագիրը զարնելու, ինչպէս տարա ձայնել ուղեցին իր համախոհները: Ընդունելով իսկ որ Երևուրդէն ատանկ առաջարկ մը եկած ըլլար, ի՞նչ պիտի կրնային ընել Օրմանեանին, եթէ՛ յաւիտենական վատութեան արարքին առջեւ՝ մերժել հնազանդիլ: Եթէ՛ զինքը բռնագատէին այդ մատնիչ տողերը օտորագրելու՝ ճշգրիտ պարտականութիւնը չէ՛ր իրեն՝ «կը հրաժարիմ պատրիար-

քութեան, բայց չեմ ստորագրեր» պատասխանելու:

Եթէ Օրմանեանի բոլոր ցածութիւնները «օտիպուած էր»ով մը արդարացնենք, այն ատեն ինչու չարգարացնել ո ու է մատնիչ, ո ու է ոճրագործ, ինչու չարգարացնել Մեծ-Մարդասպանը: Չի կայ բան մը որ կարենայ օտիպել պարկեշտ մարդ մը իր խղճմտանքին դէմ քործելու: «Օտիպուած էր»ը կեղծատրուերու, վատերու, դատաճաններու պատրուակն է:

Ճշմարտութիւնը այն է որ պատրիարքը չուզեց առատաձեռն պախշիչներու հագուազիւտ առիթ մը ձեռքէ հանել:



Հայոց պատրիարքին կեանքին մէջ չկայ հետք մը որ ժողովուրդին համար գարգիլի ու սրտցաւ հոգածութեան վայրկեան մը նշանակէ: Անձնապաշտ, շահամոլ ու վայրագօրէն զուարճասէր՝ Օրմանեանի փոյթը չէ թէ Հայ Աշխարհը մշխիթի վերածուի: Երևուրդի Դիւանարին պէս, իր նշանաբանն է «ինէ վերջը ջրհեղձը»:

Համոզուած ճիգովիթ՝ — ու ստիկա իր պարծանքն է — Օրմանեան չանդիտէր վախը զոր սուլթանին պիտի ազդէր Պոլսոյ զեպանական մարմինն իր հպումը: Օրմանեան զիտէ նաև թէ առկախ մնացած երկրորդ սկան շատ մը խնդիրներ պիտի կարենային լուծուիլ, եթէ պատրիարքական աթոռին քնակաւ հեղինակութիւնը յարգել տալու չափ կամք ու կորով ու անշահախնդրութիւն ցուցունէր ինքը: Անոնք որ մեր այս հաստատումները տարապայման լաւատեսութեան մը վերագրելու տրամադիր են, անոնք կը սխալին, իրենք ու անձերը մօտէն դիտելու պատեհութիւն ունեցած չըլլալով:

Սիտի կաթողիկոսական ընտրութեան վերջին անյաշող փորձին առթիւ Օրմանեանի հրաժարականին կատակերգութիւնը պիտէք: Մահամաղորութեան վերացնութիւնը, Սիտի կաթողիկոսական ընտրելիներու ցանկին սրբագրութիւնը, Սիտի աթոռը Պոլսոյ պատրիարքութեանէն անջատելով ուղղակի Դրան իրաւասութեան ներքև դնելու պահանջները կ'ըլլային կառավարութեան կողմէ, պահանջներ զորս պալատին թելադրած էր Հայոց պատրիարքին մտերիմ խորհրդական Գարբիէլ Նորատունկեանը: Թիւրք նախարարները անյուր նախատինքներ թափեցին պատրիարքական հեղինակութեան վրայ: Իր հրաժարագիրը ճմրջկած երեսնիվեր նետեցին: Գարու-Քեաւհիտին վանեցին, ու վերջապէս խնդիրը ամիսներով քաշկոտուեցաւ: Օրմանեան իր զուարթ վայելասէրի հանգարտութիւնը շաա չխոռվեց: Ու վայրկեան մը չմտածեց զեպաններուն ուշադրութիւնը հրաւիրել Դրան այլանդակ յաւակնութիւններուն, ինչպէս գաւառին մէջ երթեկութեան արգելումին ու օտիկանական արտակարգ կեղեքելի միջոցներուն վրայ — օրոնք իր հրաժարականին հակա կէտերը կը կազմէին:

Իրիկուն մը սակայն իրարանցում մը սկսաւ յանկարծ
Երկար դէ՛ջ։ Ռուսական զեօսպան Չինովիէֆի Հայոց
պատրիարքին տուած երկու ժամուան ժօտ այցելութեան
ու խրատութիւն խօսքերուն լուրը կայծակի արագութեամբ
Երկար Հասեր էր։

Օրմանեան անմիջապէս պալատ կանչուեցաւ։ Սուլ-
թանը իր համակրանքը յայտնեց անոր ու խոստացաւ
հրաժարականին պատճառ եղող բոլոր խնդիրները կար-
գադրել։ Նախարարներուն հրաման տուաւ Հայոց պատ-
րիարքին պահանջները ուշադրութեան առնել ու Օր-
մանեանին ալ՝ որ պալատէն ուղղակի Պատրիարքարան
երթայ ու իր պաշտօնին զուխը անցնի։ Օրմանեան
հնազանդեցաւ։ Առանց կայսերական խոստումներուն գոր-
ծադրութեանը սպասելու կորովալից, յամառ ու վրդո-
վեցուցիչ նշան մը ցոյց տալու՝ ետ առաւ հրաժարա-
կանը։ Ու հետեւալ օրը առօք փառօք օուլթանին «Հայ-
րախնամ հոգածութեան» յանկերզը երգեց Խառն ժո-
ղովին մէջ ու անոր «Թանկագին կենաց» աղօթքը ար-
տասանեց։

Ու գիտէք թէ ի՞նչ եղաւ այս ջերմեռանդ մաղթանք-
ներուն արդիւնքը։

Ամէն անգամ որ Օրմանեան կայսերական պախշիշ-
ներու պէտքը կը զգայ՝ ազգօտրական բոցավառ զգա-
ցումէ մը մղուած՝ առկախ խնդիրներու կարգադրութեան
փորձին կը ձեռնարկէ։ Այս մշտնջենապէս անլուծելի ու
շահաւէտ խնդիրներէն է Սիօի կաթողիկոսական հարցը։
Տարի մը առաջ՝ երբ այս խնդիրը նորէն յուզուեցաւ,
Օրմանեան թեկնածու ներկայացաւ ու ջանաց ինքզինքը
ընտրել տալ։ Տիրահոչակ Բարթողիմէոսին հետ պա-
լատի ընտրելիներէն մէկն էր ինքը։ Գիտէք թէ ի՞նչպէս
վիճեց Սիօի կաթողիկոսութեան շուրջը պալատի ու Օր-
մանեանի միջև օտրուած դաւը։

Օրմանեան անվհատ, թեւերը սոթտած, նոր թափով
մը պատրաստութիւններ կը տեսնէ դարձեալ Սիօի կա-
թողիկոսական խնդիրը լուծելու։ Տէր-Ներսէսեանը Մէր-
օսին ու Երուսաղէմ փութացուց իր ընտրութեան ի նպաստ
մարդիկներ շահելու, դրամով ու սպաննալիքով։ Երկ-
արդի Գահիթին արիւնոտ թաթերը լցելով դիզած գու-
մարէն մաս մըն ալ Խապանեանին խոստացեր է, որպէս-
զի ընտրողական ժողովի նախագահը, ապագայ ընտ-
րութեան միջոցին, ի նպաստ իր կաթողիկոսացման աշ-
խատի։

Եւ հոս չեն վերջանար Օրմանեանին շահատակու-
թիւնները։

* * *

Ահա մարդը, որ կոչուած է՝ Հայը զարնօղ ահաւոր ա-
ղէտներէն ի վեր, անոր ճակատագրին հօկելու Թիւր-
քիոյ մէջ։ Խօսք մը միայն օւնինք իրեն։

Օրմանեան թո՛ղ չքաջալերուի անգիտակից ու շուա-

րած ժողովուրդի մը անտարբերութենէն։

Պատրիարք, կաթողիկոս կամ պարզ եպիսկոպոս,
Գում-Գաբու, Սիօ կամ Մաքրի-Գիւղ, ո՛ր սր ալ կըրտ-
նուի ա՛ն, Յեղափոխութեան իրաւարար ձեւքը ուշ կամ
կանուիս պիտի գայ զարնել՝ ցեղեր ապականող այդ ժահ-
րոտ գոյութիւնը։

ԱՋԱՏ ԽՕՍՔԵՐ

ԶԷՋՈՒՆՆԵՐԸ

Ատոնք ալ չմոռնանք, թէ եւ ամէն յատկութիւն ու-
նին ինքզինքնին մոռցնել տալու սատարող, առանց
սակայն անկեղծօրէն մոռցուիլ փափաքելու, երբեմն
փնտոելով իսկ գգուական ուշադրութեան մը համա-
կիր նայուածքները, պայմանաւ որ, ատոր համար, ո՛ր
է ճիգի, ո՛ր է փոխարինութեան, ո՛ր է զօհողութեան
չօտիպուին։

Բայց ի՞նչ է չէզոքը։

Օ՛, անհուն, անգիտակից ծառայութիւնները զորո-
ւանմեղ, անվատ, անտեսուած բառեր կը մատուցանեն
յանկարծ արգարացումի ու խուտափանքի պէտք ունե-
ցողին։ Երբ մարդ ինքզինքը չքմեղելու հարկին մէջ
կը զգայ ու շուզեր խոստովանել իր յանցանքը և երբ չի ալ-
կրնար բանաւոր առարկութեան մը կոթնիլ՝ բառերու
խառնակոյտին կը դիմէ շուարած, ու առաջին հանդի-
պածին վրայ կը գնէ ձեռքն ու հոգին։ Կը պատահի որ
բառերը յաճախ տեսլականօրէն կը յարմարին, գործի
կուզան, կը մեղօակցին ու իսկական նախախնամութիւն-
ներ կ'ըլլան այդպէս զիրենք գտնող, իրենցմով զինուող-
ներուն համար։ Գրեթէ միշտ, օովորական իմաստներ-
նին կը կորսնցնեն բառերը այդ պարագաներուն։ Փոյթ չէ՛
ասիկա։ Իրենց օժանդակութեան ապաւինողը փրկուած է։
Բայց հող չի վերջանար բառերուն առաքինութիւնը։ Աւելի՛ն
կայ։ Երբեմն անսահման չշահագործուած հանքեր են ա-
նոնք, որոնցմով կը յաջողին իրենց բաղդը շինել հազ-
ուագիւտ անխղճահարութեամբ վարպետողիներ միայն։
Շատ անգամ՝ աւելի համեստ՝ կը բաւեն ու է տիրացուի
մը կեանքը ապահովելու։ Բառով մը իրենց ասպարէզը
ընողներ, բառի մը երեսէն ապրողներ կը պակօին միթէ
մեր մէջ։ Քանի մը հատ են այդպէս, որոնք Հայ հասարա-
կութեան մէջ մտած, քաղաքացիութեան իրաւունք տուած
են ինքզինքնուն ու գրեթէ հարկադրուած, ընդունուած,

նուիրագործուած Հայուն ողբալի մտայնութեանը վրայ գէշ աղէկ կը քալեն ճամբանին ու իրենց սեփականա- աւերերուն գործը կը տեսնեն: Ատոնց վրայ ալ պիտի խօսինք ժամանակին:

Չկողոր ատոնցմէ չէ, բայց ատոնց չափ ու թերեւ աւելի ապուշ ու անարդ: Անիկա շահելու, օգտուելու, առնելու նուաստացուցիչ մտահոգութիւնը չ'ենթադրեր անշուշտ, սակայն միշտ չկորսնցնելու, չ'իստուելու, չտալու վայրագօրէն եսական զգուշաւորութիւնը կը մատնէ որ այլապէս պժգալի ու ըմբոստացուցիչ է շատ անգամ: Պարագաներ կան, ուր չգոհելը՝ գողնալէն աւելի ստորին է ու մեղապարտ:

Այս «չէզոք» բառն ալ «պահպանողական»ին պէտք — անկից նուազ կտրուի ու բիրտ, աւելի առաձգական ու բարդ, աւելի խուսափուկ, անորոշ ու յանկուցից — մէջ Յնցումին յաջորդ օրերուն եղած սխրալի գիւտերէն է, որոնք ծառայեցին՝ ու կը ծառայեն տակաւին պատ- րանկանօրէն անպարտելու՝ Կոիւին մասնակցած չըլլաու վրէժխնդիր ու ինքնաձիւն ամբաստանութենէն՝ բոլոր անոնք որ ուխտած էին՝ Կոիւն վերջն ալ, աղէտքին ահագնութեանը առջեւ՝ շարունակել իրենց անկարեկիր ու շարագործ մեկուսացումը:

«Պահպանողական»էն նուազ շնական լրբութեամբ, աւելի խորհրդապահ չափաւորութեամբ գործածուած՝ այդ «չէզոք» բառը կը բնորոշէ անպարտաճանաչ ու անար- ժան Հայերու վիթխարի զանգուած մը:

Չէզոքները շատ չեն խօսիր, աղմուկ հանելէ չեն ախորժիր: Ինչո՞ւ պարապ տեղը վրդովին իրենց լծացած խաղաղութիւնը: Լոկի, մեջիկ, մէյ մէկ անկիւն քաշուած՝ «իրենց գերծերուն» կը հետամտին: Կրցածնուն չափ կը խուսափին, կը հեռանան անողոք ձայներէն, որոնք կըր- նան իրենց հասնիլ ու հանգիստնին խանգարել: Բայց պատահմամբ երբ տեղ մը կը գտնուին ու կըստիպուին բան մը ըսել, բացատրելու, պատճառաբանելու, պաշտ- պանելու համար հանրային մտազբաղումներու մասին իրենց հոգեկան ու մարմնաւոր ապստամբութիւնը ու ի- բենց անձնապաշտ, այլամերժ կղզիացումը՝ դառնացած, լուրջ, զմայլելի ծամածուութեամբ մը՝

— Ես չէզոք եմ, եղբայր, կը հառաչեն, ամէն բան քսած ըլլալու չըլլալի՛ք մտտահոգութեամբ մը:

Յաճախ ալ, այդ բառը՝ իրենց բերնին մէջ՝ գայթակ- ղական զարմացումի անանկ տարօրինակ շեշտ մը կ'առնէ որ՝ չգործելու ինքնարդարացումէ մը աւելի՝ գործելու համոզում ու տարբեր եղանակի մը չատագովութիւնն է կարծեօ գոր կը թուին ընել:

— Բայց մենք չէզոք ենք... չէ՛ք գիտեր...

Այսինքն՝

— Բայց ի՞նչ կ'ըսէք... մենք բան մը չընելու մեծ գործը կ'ընենք... չէ՛ք գիտեր...

Ասանկներուն չէք հանդիպած: Կը վխտան սակայն

անոնք արտասահմանի բարեկեցիկ Հայ գաղութներուն մէջ:

Հայրենասէր... Օ՛, ամենքն ալ կատաղօրէն հայրե- նասէր են: Հատ մը չեօ գտներ որուն աչքերը արցունքով չլեցուին, որուն ձայնը յուզումէն չզոզողայ, «Հայաս- տան» քսած ատենը: Անոր համար արիւննին թափելու պատրաստ են: Բայց չըլլայ որ՝ հանրային փրկութեան Գործին նպաստ մը ընել թելադրէք իրենց: Անմիջապէս կը պրկուին, կը ծառանան դէմերնիդ ու յաղթական՝

— Բայց մոռցա՞ք որ չէզոք ենք մենք, կը մոնչեն, ու՛ Հայաստանի մտածումին իրենց պատճառած չէզոք արցունքներն ու չէզոք հառաչանքը կու տալով՝ կոնակ- նին կը դարձնեն ձեզի ու կը հեռանան, կը չէզոքանան:

Ատոնցմէ ոմանք չեն քաշուիր նոյն իսկ յեղափոխա- կանի նրբութեան առնելու: Բայց ամենքն ալ գոհ չեն արդի յեղափոխականներէն: Ի՞նչու: Մի՛ հարցնէք: Այլը գրուագին վրայ չեն ցամքիր: Ատիկա իրենց չըվազ ա, պարայրն է:

— Եղբայր, ի՞նչ կ'ըսեօ կոր... Յեղափոխութիւնը ժա- մանակին կ'ըլլայ... ժողովուրդը պատրաստ չէր... նախ պէտք է ուսմունք տալ ժողովուրդին... պէ՛տք է զպրօցներ բանալ... իրագիտութիւն ու աշխարհագրութիւն ու մա- նաւանդ տոմարակալութիւն սորվեցնել Հայ տղաքներուն, որպէսզի կարելի ըլլայ յետոյ յեղափոխութիւն ընել... մերինները ասանկ չըրին... ազգին տունը քանդեցին... չէ նէ մենք հիշ կը կենայինք... մենք հարկաւ բան մը գի- տէինք որ տեղերնիօ նստեցանք... մենք չէզոք էինք ու չէզոք կը մեանք... վէտեւա՛մ...

Չէ՛, նոր բան չէ իրենց չէզոքութիւնը, ու անամօ- թաբար ու անգիտակցաբար կը խոստովանին երբեմն ա- սիկա: Եսականութեան հին, սեւցած, գարշահոտ շապիկն է ան զօր հագած են իրենց մարմինին ու հոգիին վրա- յէն եւ զօր երբէք չպիտի փորձուին հանել, նետել:

Կոիւի ահաւոր օրերուն, երբ Յեղափոխութիւնը՝ իբր քրիտասարդ կուրծքը տուած դարաւոր Բռնութեան մո- լեգին հարուածներուն՝ կը յամառէր, կը զարնէր, կը զարնուէր, կ'արիւնէր պատնէշներուն վրայ ու դռներուն առջին, անոնք՝ իրենց չէզոքութեան ծակերուն մէջ թխմուած, օմքած՝ Կոիւին արդիւնքին սպասեցին, ա- ոանց պատուհաններէն դուրս նայուածք մը յանդգնելով՝ կուռողներուն եղբայրական ձայները, անոնց օգնութեան, ձեռնտուութեան աղաղակները լսելու: Դուրսը, Կոիւին պաշարը հատեր էր, գնդակները սպառեր էին ու վեր- ջին կուռողներէն շատերը ինքնիրենց դէմ կը դարձնէին իրենց հուսկ հարուածները: Չէզոքներէն ո՛չ մէկը իր պարտքը կատարած էր Կոիւն առաջ, գոնէ կուռողնե- րուն կրակը ապահովելու համար, չէզոքներէն ո՛չ մէկը դուրս ելաւ, վերջին պահուն՝ օգնութեան փութալու, թե թիկունք հասցնելու Յեղափոխութեան սպասած ու

դիցազնական ճիգերուն, ու Կոիւր՝ ա՛լ մերկ ձեռքերով
ու պարսպ հրացաններով շարունակուած՝ չէր կրնար հար-
կաւ բաղձալի արդիւնքին յանգիլ:

Սխալ ու անտրամաբանական է բոսիլը թէ Յեղափո-
խութիւնը ժամանակէն առաջ պայթեցաւ մեր մէջ: Երբ
մարդու մը կամ ժողովրդի մը մէջ Ընդվզումին կայծը
կը սպրդի, ա՛լ զանիկա սանձելը, բռնկած հոգիները մա-
րելը անհնարին է: Ու այդ անշիջելի կայծը տարիներէ
ի վեր ինկած էր Հայուն հոգիին մէջ ու զայն կը հըր-
դեհէր ամէն օր, հետզհետէ անճեցուն ու ժպտութեամբ մը,
որ վերջնական համայնածուխ բորբոքումը անխուսափե-
լի կ'ընէր:

Ճշմարտութիւնը ա՛յն է, որ անընկճելի է միշտ Յե-
ղափոխութիւնը ու Հայունը՝ իր առաջին քայլին՝ պիտի
յաղթէր, եթէ չէզոքները նետուողներէն աւելի չըլ-
լային, եթէ առաջիններուն դաժան ու վատ անշար-
ժութիւնը չըլլատէր, չարգիլէր վերջիններուն ազնիւ ու
անձնուրաց խոյանքը, եթէ ամէն Հայ իր պարտակա-
նութիւնը ամբողջովին ու սիրայօժար կատարած ըլլար
ժամանակին: Չայնեմիս կտրենք ու ամչնալ սորվինք քիչ
մը, -- մենք այն ամօթալի ժողովուրդը չենք մի որ ա-
նօթի ձգեց անպարտելի Չէյթունը, մինչդեռ միլիօն մը
տեղացնելու էր այդ անվկանդ լեռներուն վրայ... Յե-
ղափոխութեան համար, Կոիւն վերջը չէ՛ որ կուտան
գրամը, այլ Կոիւն առաջ: Կոիւն վերջը գրամը՝ դի-
տկներ թաղելու համար միայն օգտակար կ'ըլլայ: Կոիւն
առաջ անոր հօր պատրաստութեանը համար անհրա-
մեշտ է ան:

Չէզոքները դեռ չհասկցան ասիկա: Ու հիմա իրենց
անիմաստ ու կեղծ տիտղոս — չքմեղանքին փութկոտ յայ-
տարարութիւններովը կը նմանին՝ ցորեկ ատեն, աչքեր-
նուն առջեւ սկսող հրդեհի մը օգնութեան չվազող դրա-
ցիներու, որոնք աղէտքին մինչեւ լրումը՝ անոր անշարժ
հանդիսաւաններն ըլլալէ վերջ, կ'եւլեն շիտատովանուած,
այլ իրական վրդովումով մը՝ կարելի ու անկարելի պատ-
ճաններ փնտռել դժբաղդութիւնը բացատրելու և իրենց
անտարբերութիւնը մոռցնել տալու բոռն անպարանքով
մը, որ չարգիլէր սակայն զիրենք ամենի ամբաստանու-
թիւններ թափելու հրդեհուած ասան մոխրերնորուն տակ
գեւ մխացող ամխացած դիակներուն վրայ:

* *

Չէզոքները անմխիթար մեացին Յեղափոխութեան
դիակը իրենց առջին գեանի վրայ փռուած շտեմնալնուն:
Մէջտեղէն վերցնել զայն ու մէկ անգամէն ազատիլ անոր
պատճառած անհանգստութիւններէն ու անուղղակի, ան-
թուսափելի հոգերէն, ի՛նչ երազ ու ի՛նչ դժնտակ պատ-
բանք իրենց համար:

Չէ՛, չմեաւ Յեղափոխութիւնը: Այդ առաջին քայլը

փորձ մը, մարգանք մըն էր եւ որչափ ալ որ սուղի նստաւ
ան մէջի՝ պիտի իր անփոխարինելի օգուտը ունենայ ա-
կայն ապագայի նորանոր բաղխումներուն կատարելու-
թեանը համար: Գալիք անգամ, շատ բան փոխուած, շա-
բան օրբագրուած, շատ բան հասկցուած պիտի ըլլայ:
Ու չէզոքները լաւ կ'ընեն սրտցաւ ազգաբարութիւն մը
նկատելու իրենց այս խօսքերը: Վաղուան կոիւն՝ ա՛լ
չպիտի կրնան ուզածնուն պէս վարուելու, ուզածնուն
պէս չէզոքանալու, ուզածնուն պէս մատնելու: Իրենց
բռնելիք զիրքը՝ իրենց կամքէն կախում չպիտի կրնայ ու-
նենալ: Ըսել չենք ուզեր թէ իրենց թեկն պիտի բռնենք
ու զանոնք ետնուա քաշկոտելով պայքարին դաշտը պի-
տի տանինք հետերնիս: Ո՛չ մէկ ճշմարիտ յեղափոխական
զինուոր պիտի զիջանէր ատանկ բռնի ու վիրաւորիչ
զինակցութեան մը ու վատերու հետ միասին կոուրլը՝ Գա-
ղափարին համար զոհուելու, մեռնելու բովանդակ
հրճուանքը պիտի պղտորէր: Չէզոքները դո՛ւ ելլալու
պէտք չունին: Իրենց հոգին աղէկ կը ճանչնանք: Գի-
տենք որ առաջին բաղխումին՝ օտքի վրայ կուտողներու
ծունկին պիտի փաթտուէին օարսափահար ու կիսամեռ ու
պիտի արգելք ըլլային անոնց ազատ ու ամենի թափին:
Ի՛նչ օգուտ կայ Կոիւն այդ կենդանի-դիակներէն: Յե-
ղափոխութեան պատնէշները կանգնելու համար պիտի
կրնայինք թերեւ զործածել իրենց մարմինները, բայց
մինչեւ վերջը պէտք պիտի ըլլար աչքի առջեւ ունենալ
զանոնք, և յետոյ իրենց տուններուն հիմնաքարերն ու
պերաններն ալ կրնան մեր գործը տեսնել: Չէ՛, թո՛ւզ
հանգարտին: Կոիւն փառքէն կտոր մըն ալ չի պիտի
բաժնենք իրենց հետ: Չպիտի ճանչցնենք իրենց Ազա-
տութեան համար թափուող, յորդող, վազող արիւնին
անասելի զեղեցկութիւնը: Բայց Կոիւն առաջ, պահ
մը պիտի հանդիպինք իրենց: Պարզ, կարճատեւ այցե-
լութիւն մը, ուր շատ ատեն չպիտի ունենան իրենց չէ-
զոքութեան հրապոյրները պատմելու մեզի:

* *

Հայ ունեւորը — այդ իժնէ չէզոքը — պիտի կրնայ
չէզոք մնալ, որչափ որ խնդիրը բարոյական ու ֆիզիքա-
կան մասնակցութեան մը վրայ է: Այս տեսակէտով, Հայ
հարուստները, բոլորն ալ չէզոք մեացին անցեալ ան-
գամուն: Ու իրենց չէզոքութիւնը կատարեալ ու ամ-
բողջական պիտի ըլլար եթէ յեղափոխական տեսօրը
զայն խոսել չտոխակէ:

Բայց չի՛ պիտի ըլլայ որ անոնք իճքնաբերաբար
ու համոզուածով իրենց նիւթական օժանդակութիւնը բերեն
այսուհետեւ Սուրբ Գործին: — Կը հարցնենք ասիկա,
առանց շատ սպասելու անկեղծ ու համարձակ պատասխանի
մը: Ու կ'աւելցնենք,

— Ազատութեան Արեւը կոուտողներուն համար չէ՛

միայն որ կը ծագի, այլ կուուղներու զիականերուն վրայ, աւանդ, ու անոնց արիւնովը կարմրած: Կուուղը կը հաւտայ անոր ու կը մեռնի անոր համար, առանց զայն, անգամ մը, իր աշուրներովը համբուրած ըլլալու: Կոն- ւին հագուագիւտ վերապրողներուն հետ, չէզոքներն ու զաստիքներն ալ— ու անոնք մանաւանդ— պիտի վայելն Նոր Ծառագայթին կենսատու շերմութիւնը: Ու եղբայր- ներու անգին արիւնովը տիրացուած Ազատութիւնը ձրի վայելելը գողութիւն չէ՛, այլ ոճի՛ր...:

ԿՈՒՋԸ

Շարունակութիւն նախորդ քիտն է վերջ

Աւերակ թաղը Կ. քաղաքի Զէյթունն է: Հերոսա- կան զիմադրութիւններու փառաւոր անցեալ մը ունի ան: Քանի՛ քանի՛ անգամներ, քիւրտ խուժանը յարձակելով այդ թաղին վրայ, շարաշար պարտուած ու կորագլուխ ետ դարձած էր: Աւերակի աւանդական քաջութիւնը այն- քան ծանօթ էր այլ իրենց որ ամբողջ ուժերնին հոն կեդրոնացուցած էին: Քաղաքին բանալին էր ան: Անոր ջախջախումը տեղային Հայութեան ջախջախումը կը նշանակէր:

Վճռական օրը չուշացաւ:

Տափուզ զօրնայի ձայնով յարձակումը սկսաւ: Հա- յերը, պարտէզներու պատերուն ետև ամրացած, յաջոր- զական յառաջխաղացութիւններով, իրենց պատնէշներէն հեռոցետէ զուրս ըջեցին քիւրտերը և անոնցմէ յիտունէն աւելին չարդեցին:

Հայ ու շարդուիլ, — այս երկու բառերը բնական, գրեթէ ճակատագրական կցորդութեամբ մը կը միանան իրարու, կարծես իրար կամբողջացնեն: Բայց Հայ ու շարդուիլ, — ասիկա անբնական, գրեթէ այլանդակ բան մը չունի: Կ. քաղաքին մէջ առաջին անգամ չէր սա- կայն որ այդ սահմակող ու շքեղ հերքումը կուտար Հայը իր ճակատագրին վրայ ծանրացող սարկական զոհուողի պատմական մեղադրանքին:

Քիւրտերը՝ թալանի համար միայն եկած՝ մտքեր- նուն բնաւ չէին անցներ օր՝ քանի՛ մը կտոր ապրանքի փոխարէն՝ իրենց կտրիճ երիտասարդներուն զիակաները պիտի տային հայ ըմբոստներու գնականներուն:

Թափուած արիւնին կարմիրը երկու կողմերն ալ բորբոքած, մուգնած, քստմնած էր: Քիւրտը վրէժի ծա- բաւն կը գալարումը հիմա, իսկ Հայը իր գոյութեան կեփը կը մղէր զայրացկոտ ընդդիմութեամբ մը: Չեղբ

տակ ունեցած պաշարը այնքան անբաւական էր սա- կայն որ իր կատաղութիւնը՝ վառօդի մուխ շնչելու կա- րօտ՝ ստիպուած էր կոնիւն կրակը խնայել: Քիւրտի մը կամ թիւրքի մը մահուան գինն էր իւրաքանչիւր գնդակը. հիմա միայն անոր արժէքը կ'ըմբռնէին... Կա- րելի չէր անոնց՝ զուրս, բաց դաշտին մէջ ու արձակ օդին իրենց սահմանաւոր ռազմամթերքը սպառել: Աննկուն հողիով տուները քաշուած հայերը, առանց տեղերնուն շարժելու, կ'արգիլէին մերձեցումը քիւրտ հրոսակներուն որոնց միացած էին հիմա քաղաքին թիւրքերն ալ:

Աւերակ թաղը բլուրի մը բարձրաւանդակին վրայ կը կենայ ու քաղաքը իր ամբողջ երկայնութեամբը ա- նոր առջեւ կը տարածուի: Մեղաօ գետի երկու ափերը զուգահեռական ընթացող տուներու շարքերը սկսան հրգեհուիլ, ու մութը՝ այրուող մարմիններու ճենճերոտ հոտին հետ կը լեցնէր ձորամէջը: Ամէն կողմէ հրացա- նաձգութեան խուլ աղմուկ մը կը բարձրանար, ու կա- նոնաւոր ճակատամարտի մը երևոյթը կը ներկայացնէր գետահովիտը:

Թաղի մը մէջ անցածը դրացի թաղերէն չէր գիտ- ցուեր: Աւերակի մաքառումը երթալով կեդրոնացած էր հսկայ շէնքի մը շուրջը ուր ապաստաններ էին քսանէն աւելի Հայեր: Քիւրտերը զուրսէն, պատերուն ետևէն, քարերուն քովերէն, ծառերու բուններուն կոթնած՝ իրենց գնդակները կը տեղացնէին պատուհաններէն ներս, ուրկէ՛ հայ գնդակներ միկնոյն կատաղի յամառութեամբ կը պա- տասխանէին, մահաշունչ հեքերով:

Հայր ու տղայ այդ կրակող խուժին յառաջապահն էին, հրացանները փոխն ի փոխ կը լեցնէին ու կը պար- պէին: Միտուած, յարգուած ու կտրիճ մարդ էր Բար- թող տղան: Տարիքը առած ու ալուր՝ բայց այդ մա- հու և կենաց րոպէին՝ պատուհանին քով կեցեր էր ան ու խրօխա ու վեհափառ՝ հայրական առնութեամբ մը ցոյց կուտար զինքը շրջապատող դեռատի երիտասարդ- ներուն թէ՛ ո՛ր պէտք էին ուղղել հրացանները և ե՛րբ քա- շել ըլլակաները:

Պիւցազնական ծերունին՝ իր հոյակապ կեցուածքին մէջ աստուածացած՝ տակաւին ձեռքը պատուհանէն զուրս, զիմացի աղբիւրին ետև ուղած քիւրտերուն երկա- րելու վրայ էր, երբ գնդակ մը եկաւ յանկարծ անոր կուձքը ծակեց: Կոնիւն Հօր հսկայ մարմինը՝ անշունչ՝ դաւ- կին գիրկը դուրեցաւ, արիւնի ժայթքում մը յորդելով բերնէն զուրս:

— Վերջը կուլանք... վերջը շատ ժամանակ կ'ու- նենանք լալու, ըսաւ քաջորդին, հօրը զիական վրայ ծածկոյթ մը քաշելով, հիմա կուտելու՛ առն է... վերջը կուլանք...

Ու կարծես թէ բան մը պատահած չըլլար՝ Բար- թողին տղան պատուհան փութաց, նշան առաւ, կրա- կեց ու պայթումին մէջէն լսած քիւրտի մը հանգիւնէն

«իրտը պաղղկած՝ ընկերներուն դարձաւ, տարօրինակ ժպիտով մը առաջարկեց.

— Հատ մըն ալ դուք... ինչ աղէկ կը սատկին կօր...



Էն արտակարգ կոններէն մէկն ալ Ահեակ Թաղի եկեղեցիին շուրջը տեղի կունենար: Քիւրտերը Խօջեւզ Ծօրմանի զառիվարէն դէպի ձորը կը խուժէին, եաթաղանը ահաններուն մէջ սեղմած ու հրացանը ձեռուներին: Բայց ամէն անգամ օր եկեղեցիին բակին կը մօտենային՝ մէկը միւսին ետեւէն անդադար հասնող զընգակներ անոնց ահանջը սկրթելով, կուրծքը ջրելով կը շուային ու ոմանց սիրտն ալ այցելելով գիականացած գեպին կը փռէին զանոնք:

Գնդակահար Թշնամիի իւրաքանչիւր անկ՛ն մին՝ ուրտընդոտ ծափահարութեան մը անընդվերջ ազմուկը կը թնդացներ եկեղեցիին գմբէթարդը օրուն լուսամուտներէն մէկուն առջեւ անորոշ էակ մը կծկտեր էր, կարծես երկուքի ծալուած: Մարդու երևոյթ անգամ կարելի չէր նշմարել անոր վրայ: Այդ ահագին բարձրութենէն կորոտացներ ան երբեմն հրացանը ու զայն կրկին լեցնելու միջոցին կտրիճի երգեր կը մըմտար, խապտ ձայնի մը բոլոր անձոնի ելեւէջներովը, ու երբեմն ալ վար կախուած՝ լեղապատառ, զունաթափած ժողովուրդը կը դիտէր: Վարէն քարացած հիացումով մը իրարու ցոյց կուտային՝ գմբէթարդին օրներուն մէջ Թառած խիզախ երեսոյթը:

Կ՛ուզն էր:

Պահ մը վերջը, ուրիշ երիտասարդներ ալ միացան անոր ու հայ Աստուծոյ սեղանին զոհաբերել շտապեցին բոլոր այն քիւրտերն ու Թիւրքերը օրոնք իրենց սահմանէն դուրս քայլ մը առնելու անխոհեմութիւնը կ'ունենային:

Կռուող Թաղերուն շուրջը օր Հայուն գնդակները՝ կատակ ընէլէ դադրած՝ շէնք շիօրհք մարդ կըրպայգնէին՝ քիչ քիչ սկսեր էր ամայանալ ու ալ մարդ չէր տեսնուեր: Հրացանը օւրիշ տեղ կ'որոտար հիմա, ու հօլի բուն հոտանքը հեռուններէն կը բերէր վայնասունի օտրկական արձագանքներ...:



Կ...ի մէջ տակաւին նահապետական է ընկերային կարգուօրրքը: Թաղի մը աղաները՝ իրենց շըջանին մէջ՝ սեռակ մը իշխաններ են, օրոնցմէ կ'ահնամի աղքատ դասակարգը ու միշտ պատրաստ է անոնց ետեւէն երթալու: Մեծերուն խօսքը կշիռ ունի: Անոնք զեղ կը յարգուին հին տանուէրներու պէս, օրոնք՝ վտանգաւոր պարագաներու՝ անձամբ կ'առաջնորդէին իրենց շուրջը, իրենց հովանիին տակ ապրող հասարակութիւնը ու իրենց արութեամբ ու յանդգնութեամբ ամենուն օրինակ

ու քաջալեր կը հանդիսանային:

Բայց ո՛ր էին կորուեր հիմա այդ աղաները, ինչօ՛ւ երևան չէին ի ցար ու աղբնդէպ իրենց նալող հայերը դէպի կոիւր օտքի հաներ: Այս անձկագին հարցումով էր որ կը տագնապէին՝ իրենց ղէքերուն պըլլուած, կոուելու, Թշնամի արիւնով արբենալու անզուսպ տենջանքէն զալարուող օրտոտ երիտասարդներ:

Աղաները չերևացին:



«Անոնք որ անձնատուր կ'ըլլան պիտի ապրին»: Այդ էր Թիւրքին վերջին ճարճարակը: Ասով կը յուսար ան՝ ամէն կողմ ապաստանած ու իրենց անվրէպ գնդակներով արշաւողներու շարքերուն մէջ մահ սփռող հայերը փորձել, զինաթափ ընել, դուրս բերել: Գրամի ու պարգեի խոստումներ ալ կ'ընէին: Միջին դարերու յատկանշական երևոյթն էր որ կը կրկնուէր: Թիւրքը իր դէմ ելող ընդվզումի ուժին առջև ընկրկած՝ խորամանկութեան նենգաւոր ու զիւրիչ զէնքերուն կը դիմէր, իսկ Հայը՝ աւաղելի անհաւուսութեան մը յետագարձ մղումովը, պիտի ուզէր նօջէն իր պապերուն օխալ ճամբուն հետեւի:

Տխուր խոստովանութիւն մըն է ստիկա, բայց Թիւրքերու այդ հրաւերը՝ հայկական ազատագրութեան մը երազուած աւետիսէն աւելի խանգավառութեամբ ընդունուեցաւ: Աժպն ազատուողի օրաառոյժ զոհունակութեամբ ու զիւրաւ ու շուտափոյթ ձեռք բերուած հանդարտութեան մը խոստումներէն հրապուրուած՝ մեծ ու պզտիկ աղաներու ողբալի տողանցութիւն մը յուսաշխարհք երկցաւ վստահ ու երախտագէտ:

Այդ կամովին սպանդանոց վազողներուն ճակատագրը է՛ն կսկծալի ու է՛ն ըմբոտաքրցիչ դրուագը կը կազմէ Կ...ի պատմութեան: Երեք հարիւրով կը հաշուուին անոնք որ դուրս եկան քիչ մը ամէն Թաղերէն պզտիկ խումբեր կազմած, ձեռքերնին յանցաւորի պէս վար ձգած, գլուխնին կախ, աչքերնուն մէջ նայուածքներն մեռած՝ իրենց անօգուտ կեանքին քանի մը տարիներն երկարելու յուսով զառիվերներէն վաղցրեցան հասնելու համար հօն՝ ուր Թիւրքին խաղաղութիւն խոստացող ձեռմակ դրօշակը կը ծածանէր:

Ամբիթատրոնի ձեւն ունէր այդ բլուրի գազաթը ուուն վրայ շուրջանակի կեցած էին հազարաւոր Թիւրքեր, մերկ եաթաղանը ձեռուրնին ու հրացանը միշտ պատրաստ արձակելու: Հասնող Հայը քարացած կը մտար այդ դաժան բազմութեան առջև: Մէկը չեղաւ որ ետ դառնալ փորձէր կամ ձայն տալ համարձակէր, որպէսզի հետզհետէ հասնող, մահուան ժտեցող խումբերը ճակատագրական զառիվերէն փրկութեան վազելու յոյսը թողուին: Հասնողները խկուր իրենց զգեստներէն կը մերկացնէին ու վայրագ խումբներն զէմը կը

բչէին ու ամէն կողմէ հարիւրաւոր գնդակներ կ'արձակուէին: Հայ զոհը հեւ ի հեւ այս ու այն կողմ կը վազվառաւեր, աղաչաւոր նայուածքներով իրեն ծանօթ թիւրքերու գէժքեր կը փնտտէր ու կը գտնէր յաճախ. բայց անոնք՝ գազան կտրած՝ ոչ միայն պաշտպանութեան ո՛ր է շարժում չէին ուրուագծեր, այլ իրենց ձեռքովն իսկ մահացու գնդակը կուտային իրենց վաղիմի բարեկամին կուրծքին, ու երբ ան իր հոգեվարքը կը քաշկուտէր գերագոյն ճիգերով կեանքը պահել յամառելով՝ թիւրք դահիճները ֆիւլային քրքիչներով, կը խնդային ու իրենց հրացանը կուղղէին ուրիշ նոր զոհերու որոնք մերկ՝ շարքէն ներս կը մտնէին առանց ճիգի, առանց ընդդիմութեան ամենափոքր շարժում մը ցոյց տալու:

Երբեհարիւրէն աւելի էշահատակ իսկան հոն, մէկ օրուան մէջ խաթուած ստրուկներու վիթխարի գեթեզման մը բրգաւորելով: Մեծ մասամբ աղա անունը կրողներ էին առոնք, որոնց հետեւած էին իրենց կեանքովը ապրիլ տենջացող ծառաներ, որոնք հիմա անոնց մահուան մասնակից կ'ըլլային:

* * *

Վեց օրէն աւելի տեւեց այդ նախճիրներու շարքը: Ասդին անդին տեղի ունեցած մասնակի դիմազրուութիւնները՝ որքան ալ զիւցազնական ըլլային՝ չէին կըրնար կասեցնել թիւրք ու քիւրտ խուժանին աւերիչ ու մահասփիւռ հոտանքը, որ վայրագ ու անարգել ալ ու ձախ կը տարածուէր: Հայերու երեւակայուած միացեալ ուժը գոյութիւն չունէր: Անոնք, հանրային այդ աղէտքին առջեւ, բաժան բաժան եղեր էին ու իրենցմէ շատեք, հարձուած անասունի՝ խելայեղ շուարուծով մը, դէպի հոն կը վազէին, ուր թշնամին չէր խնայեր: Մահուան գիրկը նետուելու այդ յամառ կամայականութիւնը աւելի բորբոքած էր թիւրքին գազանական ախորժակը, ու անգամ մը Հայու արիւնով զինուլցած՝ ալ կուտուչտուչ չունէր ամ:

Ամէն անկիւններէն, ամէն փոքրիկ ձորահովիտներէն ու քաղաքը շրջապատող ապահածներու թաքտաւանդներէն կը լուռէ՞ հայտններու դիւային զոռու գոչումը:

— Հայ մը... հայ մըն ալ... հայ մըն ալ... գարկէ՛ք... սաակեցուցէ՛ք շնորհներ...

Հրացանաձգութեան ձայներէն աւելի այդ վայրենի հայհուջներէն շեղապատան՝ փախտաւանը կանգ կ'առնէր, կարծես ոտքերը իրարու հիւտուած ու բոպէ մը վերջը՝ գնդակահար՝ կ'իյնար, իր արեան լճին մէջ կը տապաւորէր:

Այս տեսարաններն ալ վերջ գտան: Թաքտոցնեւրու մէջ հայ գտնելը անկարելի էր: Իրենց տան ամբարտակներուն ետեւ ամրացեր էին քաշերը: Ու անոնք

ո՛չ հայհուջներէ կը վախնային, ո՛չ զոռու գոչումներէ: Խորխոր ու սիգապանձ՝ իրենց հրացաններուն ետեւ ծնկաչոք՝ թիւրքին կազարարէին թէ իրենց ալ դիտէին արիւն հանել, զարնել, օպաննել: Անոնք արիւնով մկըրտուած էին արդէն, թիւրքի ու քիւրտի արիւնով, ու իրենց կարծիր ներկուած ձեռքերը օդին մէջ սպառնալից վերցնելով՝ ցոյց կուտային թէ տակաւին պատրաստ էին արիւնի հոտանքները յորդելու և իրենց հրացաններու վերջին գնտակին հետ իրենց վերջին շունչը տալու:

Կոտորածի այդ ահեղ օրերուն, երբ յաղթական եղեհնը նախճիրէ նախճիր կը վազէր, թիւրքերու ահանջէն չէր վրիպած՝ փոքրիկ հայ խուժերու գործած քաշագործութիւնները: Ու ինչեք չէին լրած անոնք Ահեակ թաղի եկեղեցիի մասին:

Բերնէ բերան կը պտտէր հիմա անոր անունը: Ջինքը ճանչցող թիւրք հասարակութեան աչքին՝ մեծցեր, զիւցազնական վիթխարի համեմատութիւններ առեր կը կուզէր: Իր գնդակէն ճողոպրողները հիտսեանչ կը խօսէին անոր վրայ ու անկէ թեթևօրէն վիրաւորուածներն ալ պարծանքով կը պատմէին անիկա: Տեսակ մը փառք է քաշերու գնդակէն մեռնիլն անգամ:

Երբ անդին՝ մահուան ոտքսափէն դալկացած հայեր՝ ամէն տեղ անապահով կարծելով՝ կը վազվառաւէին աւելի ամուր ու անթափանց խորշի մը մէջ իրենց կիսամեռ մարմինները թխմելու, հոս՝ խուժ մը կտրիճներ, կուզէն առաջնորդուած, զուրս կուգային իրենց անառիկ պատնէչներէն ու թիւրք ու քիւրտ որտալու մէջ կը փնտտէին իրենց զարոյթի ժամանցը:

Հայ կոռուղներու կրակին վերջ մը տալու համար, թիւրքերը կանոնաւոր զօրքերու միջամտութեանը դիմեցին: Ասիկա տեսակ մը զինադադար, տեսակ մը հաշտութիւն էր որուն կուզէին ստիպել գանոնք: Պէտք էր խնայել անոնց. կոռուղ զիտէին, մարթել զիտէին, արիւն թափել զիտէին— կտրիճ էին, ու կտրիճները՝ ինչ ազգի ու զաւանանքի ալ պատկանին՝ խուժանին յարգանքը կը վայելէին:

* * *

Արիւնի հեղեղներուն առջեւ ոտքի վրայ հերոսաբար ապրելէ վերջ՝ անվթար հասան աւերուծի վազորդային մթամած ու եղբրական արշալոյսին: Ու սուգին ու քայքայումին ու համաօփիւռ հայ տաղտապանքին մէջ միշտ կանգուն ու անմատչելի՝ կոռուղները կապրին տակաւին: Ճակատնին բաց, նայուածքին հրապարակ ու տիրական կը պտըտին անոնք Բոսնութեան քաղաքներուն մէջ ստրուկ ամբոխները ճեղքելէն: Բարձր խօսելու, շիտակ նայելու իրաւունքն ունին անոնք թիւրքերուն հետ անոնց ազգակիցներէն շատերը սպաննած

ըլլալուն համար: Իրարու արինով ներկուած ձեռքերը շատ անգամ զիրար կը տեղմեն պատրական ու առերեւոյթ խաղաղութեան մը ճամբաներուն վրայ ու այն ատեն հայ կտրիճներուն նայուածքը կարծես կ'ըսէ իր յամառ ընդդիմութեան առջեւ դեռ երէկ զինաթափ թիրքին:

— Եթէ կուզես, նորէ՛ն սկօինք...

* * *

Կուզն ալ կ'ապրի:


Հին օրերու պատահական կոտորած տեղը ա՛լ չի գար մթազնել իր դէմքին հեզնոտ ծամածուծութիւնը: Իր սապասն անգամ կարծես քիչ մը հարթուած է իր ձեռքերէն թափուած թշնամի արինին ազդեցութենէն: Առաջուրնէ աւելի զուարթ, աւելի շատախօս ու անտակվարի՛ շիպ շիտակ քալելու ճիգերով ձեռքերը միշտ ետին կապած՝ շուկան կը շափէ նորէն ու իր կատակները կը նետէ միշտ խանութներէն ներս: Բայց իր նայուածքն ու շարժումները յաղթական բան մը ունին հիմա:

Ալ, առջի պէս, չեն խնդար իր վրայ, ու տեսակ մը նախապաշարուած ակնածանցով կը մօտենան իրեն: Ամէն մարդ կանգ կ'առնէ, ճամբայ կուտայ իրեն, ու զգուական մրմունջներ կ'արթնցնէ ամէն տեղ իր յանկարծական երևումը:

— Կո՛ւզն է... Կո՛ւզն է, կ'ըսեն իրարու, հիացկոտ ու երկիւղած ձայներով, ու համակիր ու ստրկական նայուածքներ ապշած կը հետեին իրեն:

Եւ կուզը՝ զոհ իր անցեալէն, իր փառքը շալկած կ'երթայ, կ'ուզայ, հոյակապ պայծառութեամբ մը որ կ'ընդմիջուի միայն իր յաւիտենական խնդուքին անզուսպ պատկուծներէն:

Թիրքերուն հետ առաջուրնէ աւելի կը տեսնուի, ու անոնք յարգանքով ու պատկառանքով կը վերաբերուին իր նկատմամբ: Կուզը սակայն անոնցմով կը քուարձանայ, անոնց ճիթին կը խնդայ շարունակ մուլեղին ու անկուշտ հեզնութեամբ մը, որպէս թէ անոնց ազգակիցներէն տասնեակ մը սպաննած ըլլալը աւելի իրաւունք տար իրեն անոնց հետ կատակաբանելու, զանոնք քաշկրտակու:



ՀԱՅՐԵՆԻՔԷՆ

Ա.

Մեզի շատ ու շատ շահագրգռող նոր հրատարակութիւն մը եւս Լոնտոնի մամուլէն: Ստուար գիրքը մըն է, երկու հատորէ բաղկացած, 982 էրեսով եւ կը պարունակէ 197 պատկեր: Հեղինակն է Պ. Լինչ: (*)

«Երջանիկ ազգերը պատմութիւն չունին» ըսած են, կարծիք մը զոր պիտի փորձուինք ճշմարիտ համարել երբ օրէ օր առջեւնիս կը դիզուին Ֆրանսերէն, անգլիերէն, գերմաներէն հանդէսներ ու գրքեր — թողունք օրագիրները — որոնք ամենքն ալ մեզմով կը զբաղին, մեր ու մեր հայրենիքին անցեալը կուսումնասիրեն, ներկանիս կը քննեն, ապագանիս գուշակել կը ջանան: Հայապատու հրատարակութեանց այս յորդապատութիւնը կը զուգարկի մեր պատմական կեանքին է՛ն աղիտուար շրջանին, վերջին քանի մը տարիներու ժամանակամիջոցին:

Խորհրդաւոր աշխարհի մը խորհրդաւոր զաւակները կը թուինք, խորհրդաւոր ապագայի մը նախասահմանաւ, մենք ալ, մեր երկիրն ալ:

Կենսագործ զօրութիւն մը կայ մեր ցեղին մէջ որ մեզի կ'ապրեցնէ, իբր բացառութիւն մը այն բոլոր օրէնքներուն ուրնց հպատակութեամբ ազգերը պէտքէ ապրին ու մեանին: Այդ զօրութեան գաղտնիքն է զոր թափանցել կը ջանան, Հայաստանը ու հայը քննողները: Ասոնց մէջ առաջնակարգ տեղ մը կը զբաւէ Պ. Լինչ, որուն հոյակապ երկատիրութեանը համար Տէյնի Քրօքիկ արժատականազատական մեծ թերթը կ'ըսէ թէ «Ներշնչարան մը պիտի ըլլայ պետական անձնաւորութեանց, եւ ուղեցոյց մը ամէն անոնց որ կուզեն հայկական խնդրին ամէն հանգամանքներուն վրայ լուսաբանուիլ: Ո՞ր ԱՅՆ ԽՆԴԻՐԸ ՀԻՄԱԿ ԹԷՆԻ ՀԱՆԴԱՐՑԱԾ ԿԵՐԵՆԻ, ԱՍՅՑ ԴԵՆ ԶԷ ԼՈՒԾՈՒԱԾ:»

Ամէն կարգի ընթերցողի համար շահեկանութիւն ունեցող նիւթ մը կը պարունակէ Արմենիան, ըստ անգլիական մամուլին: «Քաղաքական մարդն ու պատմաբանը, աշխարհագէտն ու լեռնաօդը, աստուածաբանն ու գործի մարդը, վերջապէս ամէն ոք իրեն համար նիւթ մը կը գտնէ այդ գրքին մէջ, վասնզի հեղինակը աշխատած է այդ երկու հատորները իր անձնական ու սուսնասիրութեանց յիշատակարանը չընել միայն, այլ և Համայնագիտակ մը այն ամէն նիւթերուն օրօնք Հայոց

(*) "ARMENIA: TRAVELS AND STUDIES" by H.B. Lynch, (LONDON: Longmans Green & Co.) 42/- nett

և անոնց բնական երկիրներուն կը վերաբերին :

Հեղինակը տասնևմէկ ամիս ճամբորդած է, մասամբ կատարածներէն առաջ, մասամբ՝ հաջորդ: Այսպէս ահա կարող եղած է մեր թէ՛ սովորական և թէ՛ արտասովոր պայմաններու մէջ ապրած կեանքերնիս իրարու բաղադրանք:

Մինակ թրջահպատակ Հայաստանը չէ որ Պ. Լինչի, և իրեն հետ Անգլիոյ ժողովուրդին, խորին ուշադրութիւնը կը գրաւէ: Արմենիայի առաջին հատորը գրեթէ ամբողջապէս ուսուհպատակ Հայաստանի նուիրուած է:

Քափառուի Անիի աւերակներուն մէջ, ուխտագնացութիւնը Էջմիածին, վերելքն Արարատի, նկարագրական էջեր են որոնք Հեղինակին զգածեալ յուզումովը կը օտարացնեն և օտարագրի՝ ընթերցողը: Հապա Հայը:

Մասիսի կատարէն անգլիացի ուղեւորը ապստամբի կը թուի ընդդէմ ըննական նոր պատմութիւններու գիտութեանը, որով կուզուի հայկական լեռը կողոպտել, ու մերկացնել բանաստեղծական այն խանգաղաբիչ յիշատակներէն որոնք իրենց գուրգուրական շուքին տակ կը հովանաւորեն Հայ ու Հայաստան անունը: «Կը կենանք հոն, կ'ըսէ Պ. Լինչ, ուր խիժաբեր փայտէ տապանը հանգչեցաւ, ուր նահապետը առաջին անգամ օտքը վերանորոգեալ ցամաքին վրայ գրաւ:»

Այս Արարատեան վերելքին նկարագրութեան առթիւ Քրօնիկը կ'ըսէ թէ Պ. Լինչ «խորապէս զգածեալ էջերու մէջ կը սուրացնէ հոգեկան այն սարսուռը որ մէն կը գողգողաւորի օտք զնոզն այդ լեռան վրայ, այդ վեհապանծ լեռան վրայ, այնքան սերտ կապուած մարդկային ցեղին մանկութեան օրերուն հետ»:

Ուղեւորը Էջմիածին կը մտնէ, Խօսքը Քրօնիկի կը թողունք:

«Էջմիածին, կ'ըսէ Լոնտոնի արմատական մեծ թերթը, Էջմիածին հայ եկեղեցիի այդ սրբութիւն սրբոցը, հոն անգլիացի ուղեւորը բազաւոր կը գանուի Խրիմեանի կաթողիկոսացմանը հանդիսատես ըլլալու 1893ին, և պատեհութիւն կունենայ խօսիլ այդ նշանաւոր մարգուն հետ, որուն կենսագրութիւնը վիպասանութեան մը պէս կը կարդացուի:»

Հոգեյոյզ Քափառու Անիի աւերակներուն մէջ:

Ռուսահպատակ Հայաստանէն չելած Պ. Լինչ կը ծանրանայ հայ ցեղին զէմ գործադրուած բնաբարութեանց վրայ: Իր անկողմակալութիւնը կասկածի ներքէ չէ: Աբաս-Քուլիան սեղանակից եղեր է Ալեքսանտր Քի զակին հետ որ օգափոխութեան համար հոն կը գանուէր, ու այս առթիւ վայելած է ուրա պաշտօնէից հիւրընկալութիւնը. կը գնահատէ նիւթական կեանքի համար ախրող բարեկարգութիւնը, յորմէհետէ ուսական գրօշակը կովկաս կը ծածանի. բայց կը հարկադրուի

ըսել թէ «շատ Հայեր այնքան առաջ կերթան որ թրջական կառավարութիւնը ուսականէն նախապատիւ կը համարին: Երկու բանապետութիւններէն մին՝ նիւթական և միշտ տազնապեալ վիճակի մէջ, միւսը՝ բարոյական է և յարատեւ:

«Թիւրքերը, կ'ըսէ Պ. Լինչ, հայերը հազարներով կը ջարդեն, իսկ Ռուսիա թեւակտուր վար կը ձգէ կըրթութեան համար իրենց թոխը. իրենց երկրին տնտեսական բարգաւաճմանը արգելք կը հանդիսանայ, և իրենց կրօնական և ազգային զգացումներուն առջեւ խոչընդոտ կը յարուցանէ. ու կառավարական ցանցին մէջ կանոն Հայոց ամէն մէկ գործը:»

Պ. Լինչ կը շեշտէ Ռուսիոյ ճարտար քաղաքակաւնութիւնը որով իր տիրապետութեան ներքեւ առաւ այն կեդրոնը ուր կը յառնեն իրենց աչքերը այն հայերը որոնք Թիւրքիա, Ռուսիա, պարսկաստան կը գանուին:

«Այսօրուան օրս, կ'ըսէ Հեղինակը, Եկեղեցին տոհմային միակ հաստատութիւնն է զոր այդ ժողովուրդը պահած է: Հայերը՝ իբր մարդ էակներ՝ իրենց իբր մարդ ապրելու բոլոր ըզձանքները այդ միակ կազմակերպութեան մէջ վառ կը պահեն:

Հայաստեր ուղեւորը մեր տոհմային նկարագիրն ալ կը գնահատէ: Յայտնած համոզումներուն առթիւ հարկ կը տեսնենք խօսքը գարձեալ Տէյի Քրօնիկի թողուլ:

«Պ. Լինչ, կ'ըսէ Լոնտոնեան թերթը, ուրիշ շատ մը ճամբորդներէ տարբեր կերպով կը նայի Հայոց նկարագրին վրայ. բարձր համարում ունի: Մինչև իսկ քաջութեան առաքինութիւնովը օժտուած կը համարէ սուլթանին զոհ ցեղը. առաքինութիւն մը որ սակայն Հայոց լաւագոյն յատկութեանց ցանկին մէջ չգրուիր ընդհանրապէս: Տարակոյս չկայ թէ Հայոց վրայ է՛ն շատ սքանչալոցներն անգամ գանոնք պիտի չգասեն — հակասկ դիպուածածին Լօրիս Մեյիքօֆի մը — ի շարք այն մարտնչող ցեղերուն որպիսիք են՝ Փարատաղցիները, Ալպանացիները կամ Թիւրքերը: Բայց ինչպէս որ Մերպիացիներէն է՛ն քաջերը Փարատաղ գաղթեցին, նմանապէս Հայոցմէն ալ է՛ն քաջերը Ռուսիա գաղթեցին:»

Պ. Լինչի հետ թրջահպատակ Հայաստան մտնելէ առաջ պահ մը կանդ անենք Տէյի Քրօնիկի այս դիտողութեանց առջև:

Հայ ժողովուրդը իր պատերազմական ոսկեզրքին մէջ միայն Լօրիս Մեյիքօֆ մը չէ արձանագրած: Յորմէհետէ Հայաստանի մէկ մասը Ռուսիոյ տիրապետութեան տակ անցաւ ու հայը կանոնաւոր բանակի մը մէջ գործելու կոչուեցաւ, ահա արիւնի ժառանգման օրէնքը իր կենսականութեան ապացոյց մը ևս տուաւ: Հայը երևան եկաւ ոչ միայն քաջարի ոգով վառ ցեղ մը, այլ միանգամայն՝ ցեղ մը որ ռազմագիտութեան համար բնածին յատկութիւններով օժտուած է:

Մէկ Լօրիս Մեյիքօֆի մը գոյութիւնը կարելի էր

դիպուածին վերագրել, բայց Հայաստանի մէկ մասին վրայ ուստական թեւարկումէն ետքը հայ զօրավարնե-
րու փայլասփիւս երևումը ամբողջ հայ ցեղին պատե-
րազմիկ յատկութիւնները շողացուց: Ունեցանք Մա-
տթօֆ մը, Արդութեանց մը, Աէհրութօֆ մը, Լազա-
րէֆ Եամիի ձեռքէն բռնած իր լեռներէն վար կ'իջե-
ցրէր զայն, Ալաքանտաղ թրքական բանակը կը զե-
րավարէր ու Կեղզոնական Ասիան աշխարհակալող ու-
սական բանակին ընդհանուր հրամանատար կը կարգուէր,
վստահութիւն մը զոր «բաշաց քաջ» ուստ Սքոպելէֆն
ալ վայելէց: Եղիովիտիքօֆի համար Լորիս Մելիքօֆ կը
յայտարարէր թէ «գերագանց տաղանդ մըն է»: Այդ
հանճարեղ հայը եթէ զեռ երիտասարդ չմեռնէր՝ Էրզրում
հոյակապ անուն մը պիտի թողուր Ռուսիոյ զինուորական
տարեգրութեանց մէջ:

Ո՞ր մէկը յիշենք հայ զօրավարներէն, Միանսար-
եան, Արծրունի, Ալիազօֆ, Քիչմիշէֆ, Տէր-Ասատուր-
եան, Տէր-Ղուկասով, Մուրատօֆ, որուն անունը կցուած
է Մերփի գրաման: Իսկ հազարապետները — որոնց մէջ
հանրածանօթ Կամսարական — հարիւրապետները, ասոնք
թիւ ու համար թերեւս չունենան:

Ու պէտք է ընդունիլ թէ հայը՝ օտար ցեղ մը ըլ-
լալով ուստական բանակին մէջ՝ մեծամեծ արգելքներու
կը հանդիպէր յառաջացման համար, արտակարգ կա-
րողութիւններու զօրութեամբ է որ կրցած է չէզոքաց-
ման դատապարտել Ռուսին ազգային նախանձայու-
զութիւնը:

Տասնհինգ տարի է որ զինուորական ծառայութիւնը
պարտաւորիչ է Կովկասի ժողովուրդներուն. թիֆլիս ըն-
դունուած է թէ ամէն ցեղերէն, ուստ ալ մէջը ըլլալով,
Հայը աւելի կատարեալ զինուորականի տիպարը կը
ներկայացնէ:

Անտարակոյս անպիտան ուղեւորը՝ Կովկաս ու Ան-
դրկովկաս մինչեւ Արարատ՝ Հայուն քաջագործութեանց
մասին վիպանման զրուագներէ լսած է, ամենուրեք իր
առջեւ խրոխտապանձ կանգուն տեսած է հայ հերոսնե-
րու յիշատակները, եւ օրուան հայ զինուորը իր առջեւ
անցեր է: Իրեն համար նոր գիւտ մը եղած է «քաջու-
թեան առաքինութիւնը», ու նորութիւնը յափշտակեալ
օքանչացմամբ կը հաղորդէ Եւրոպայի: Ամէն նորութիւն,
մանաւանդ երբ կը մեղանչէ ընդունուած, հաստատուած
գաղափարներու զէմ, ինքնին արհամարհելի կամ ծիծաղելի
կ'երևի. բայց վաղուան յաղթանակին համար, վստահ է,
թէ ճշմարտութիւն է:

Ուրախութեամբ կը ծափէնք մեք «քաջութեան ա-
ռաքինութիւնը» հոչակող նոր յայտնութեան, Այդ յայտ-
նութիւնը պիտի հատատուի, ու Եւրոպայի հանրային
կարծիքին մէջ յեղաշրջում մը առաջ պիտի բերէ, Հայոց
նկատմամբ բազմաբեղուն ապագայի մը համար խօսաւմա-
լից յեղաշրջում:

— Միայն լա՛ւ գիտէք, թէ՛ ի հարկին լացնել ալ, կը
հարցնեն մեզի:

Քաջը չի լար, կը լացնէ... իր թշնամին:

Ապրելու իրաւունքը իր թշնամին լացնել գիտցողինն
է: Քաջինն է:

Այս է աշխարհի ճշմարտութիւնը. ով չհաւատար ա-
նոր՝ դատապարտուած է:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷՆ

Վերջերս Եիշմանեան եպիսկոպոսի մասին եղած
տարածայնութիւնը գծարդարաբար կը հաստատուի: Այս
եկեղեցականը որ ազգային յուզումի ու ակնկալութեան
օր մը, մէկէն ապահովեց իր ժողովրդակամութիւնը,
ապստամբ հեռագիր մը քաշելով Սալզպրիի նախարարու-
թեան, այսօր բարոյական անբացատրելի անկումով մը
ինքնամատուց կը նետուի սուլթանին ոտքը, ու հալա-
տարմութեան եւ փութիտ ծառայութիւններու խօստու-
մովը կը ջանայ արժանանալ անոր անարգ շնորհքնե-
րուն: Այս անգամ ալ Բարթողիմէոս եպիսկոպոսին պի-
տի մեր է, անոր ազգեցիկ միջնորդութեամբը անբասգիր մը
հասցնելու նորէն Երլտրզ:

Այս վեղարուոր ֆէլեկեանը զեռ չէ՛ արժանացած
կայսերական ուշադրութեան ու իր դաւանան արարքներուն
շարքը չէ վերջացած հաւանականաբար:

* * *

Գաւառի վիճակին վրայ լուրերը կը հասնին կսկծալի
ու միօրինակ:

Տնտեսական կացութիւնը շատ խղճալի է: Գաւառի
հայ ժողովուրդը յետին աստիճան նեղ վիճակի մէջ վը
գտնուի, մասնաւորապէս արհեստաւոր դասակարգը: Այս
անձկութեան հանգէպ՝ կառավարութիւնը սկսած է տուր-
քերու գանձման համար բանութիւններ բանեցնել: Եր-
թեկութիւնները գրեթէ դադրած են: Միայն անուանի
վաճառականն է որ գործով Պօլիս կամ այլուր կրնայ կոր-
երթալ, իսկ միջին դասակարգը միշտ ճնշման տակ է:
Իթէ կաշառքով շաշողի իր անցադրին մէջ միտքեպեր
թիւնար գրել տալու՝ եղած տեղը մնալու կը դատապար-
տուի: Մովեղերեայ նահանգներուն մէջ նաւամատուցի
խօսութիւններն անկարագրելի են: Այս խօսութեանց